Բ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1899 — ԹԻՒ 176

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ղուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Միջասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Դրանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է, իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքհարեւի անգամներու համար 20 0|0 զեղչ կըլլայ։

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ ղրկել
Խմբագրութեանս հասցէին

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

—

Դրութիւնք եւ չեն տրուիր

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ԲՕԷՐՆԵՐԸ

Թրանսվալի մի բուռն ժողովուրդը չը դիմանալով հսկայ Անգլիայի ոտնձգութիւններին՝ անհաւասար մարտը դերադասեց ստրկական հնազանդութիւնից և քաջաբար ձեռնոյը նետեց բրիտանական առիւծի առջեւ։

Աշխարհի ամենաղօրեղ պետութիւնը չամաչեց պատերազմի դուրս գալ սակաւաթիւ, բայց բոլորովին ասպետական Բօէրների դէմ՝ լոկ իր աշխարհակալական քմահաճոյքներին յագուրդ տալու համար։

Սկսվեց պատերազմը։

Աշխարհը, մարդկութիւնը լսուած ուշադրութեամբ լուրերի էր սպասում պատերազմի վայրից, ուր կռիւ են դուրս եկել երկու բոլորովին անհաւասար ուժեր՝ նիւթապէս և ֆիզիքապէս։ Ամբողջի համակրութիւնը այն փոքրիկ ժողովրդի կողմն է, որը այնքան քաջաբար որոշեց պաշտպանել իր մարդկային և քաղաքացիական իրաւունքները և դիւրութեամբ չը ենթարկվել աշխարհը սարսեցնող Ալբիոնի քմահաճոյքներին։ Հայրենասէր Բօէրը չը վախեցաւ այն ծովային գազանից—որի հետ կռիւ բռնվելուց վախենում են Եւրոպական ամենաբազմամարդ և ամենաղօրեղ պետութիւնները։ Բօէրը յայտարարեց ամբողջ աշխարհին—«մենք զարմացնելու ենք ամբողջ մարդկութիւնը մեր գործերով. այնպիսի գործերով, որոնց նմանը դարերի ընթացքում երբէք մարդկութիւնը չէ տեսել»։

Եւ այս խօսքերը լոկ խօսքեր չը մնացին—կին, աղջիկ, պատանի, ծեր, նախագահ և հասարակ քաղաքացի՝ ոգեւորված հայրենիքի և ազատութեան գաղափարով, որոշեցին գնալ պատերազմի դաշտը և պաշտպանել այն՝ ինչ որ թանկ է ամեն մի աղնիւ և ազնուական մարդու համար—«հայրենիք և ազատութիւն»։

* * *

Սկսվեց անհաւասար կռիւը, հոսեց մարդկային կարմիր արիւնը. պատերազմի առաջին օրերում՝ անգլիացիները մի փոքրիկ յաղթութիւն տարան, թէեւ շատ սուղ գնով։ Զաղթող զէնէրալ Սիմոնս մահացու վէրքեր ստացաւ և մի քանի օրից յետոյ մեռաւ։ Եւ անգլիական բախտի անիւը այդ օրից դարձաւ—Բօէրները շարունակեցին և յաղթում են. ահա երկրորդ անգամ մեծ յաղթանակ տարան—անգլիական ամբողջ մի դունդ գերեցին։

Անգլիացիներին այն դրութեան են հասցրել, որ այսօր կասկածելի է թէ կարճ ժամանակում կարողանան իրանց ժողովել և վերջնական հարուածները տան փոքրիկ, բայց քաջ հասարակապետութեան։

Բօէրները օրչափ քաջ, նոյնքան և աղնիւ են. նրանք իրանց յաղթութիւններով չեն արբեցնում, վիրաւորված թշնամիների և գերածների հետ վարվում են ամենամեծ բարութեամբ և յարգանքով։

Այս, առ այժմ Բօէրները յաղթում են. բայց պիտի դիմանա՞ն մինչեւ վերջը. հարուստ ու զօրեղ Անգլիան աւելի չը պէտք է կատաղի, տուած կորուստների վրէժի զգացմունքը չը պէտք է նրան գազան դարձնի։

Պատերազմը վտանգաւոր կերպարանք է առնում, քմահաճոյքներից առաջացած արիւն հոսեցնելու խաղը բորբոքվում, ընդարձակվում և վայրենի կրքերն է մէջտեղ գցում. ի՞նչ պէտք է լինի արդեօք սրա վերջը—Թրանսվալմէն մինակ պիտի մնա՞յ իր գաղանացած ու կատաղած յուժկու հակառակորդի ձեռքում և վերջ ի վերջոյ խեղդվի, թէ՝ նրան օգնութեան կը հասնե՞ն անգլիայի հակառակ պետութիւնները—և կսկսվի համաշխարհային պատերազմը ու ծով ու ցամաք մարդկային արիւնով կը ներկվին...

Առաջին դէպքում քաջարի Բօէրներն են կորցնելու իրանց ինքնուրոյնութիւնը, իսկ երկրորդ դէպքում ամբողջ մարդկութիւնը միլիոնաւոր զոհեր պէտք է տայ...։

Տեսնենք։

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԸ

Կ. ՊՕԼԻՍ, 24 Հոկտ.

Ու յաջորդեց Օրմանեանի առաջին քարոզին երկրորդ քարոզ մըն ալ «եւ եղեւ նոր շաբաթ եւ եղեւ նոր կիրակի»... բազմա բովանդակ, նշանաւոր քարոզ մը։

Կարծես խօսողը նախկին զգոյշ, ճիզուիթ, խորամանկ Օրմանեանը չէր...

Այս քարոզը խօսեցաւ Օրմանեան Բեոալի եկեղեցիին մէջ, անցեալ կիրակի օրը։ Ցանկզնութեան, անամօթութեան ու անբարոյականութեան մարմնացումն էր այդ քարոզը։

«Բժիշկ բժշկեա՛ զանձն քո»—ասիկայ էր քարոզին ընդարանը։

Ամէն մարդ թող միայն զինքը մտածէ, իրեն հոգայ, այլոց մասին երբէք պէտք չէ հոգալ, անոնց գործերուն երբէք պէտք չէ միջամտել...

Կը հասկնա՞ս ընթերցող, այդ նախադասութիւններու մէջ ամփոփուած սարսռացուցիչ անբարոյական միտքերը։

Էն առաջ սա է նպատակը։ «Ես Պատրիարք եմ, ինչ կուզեմ, անիկա կընեմ. դուք իմ գործին խառնուելու իրաւունք չունիք։ Եթէ խելք ունիք՝ բժշկեցէք ձեր անձը—ձեր մասին միայն մտածեցէք...

Ցեկատեցէք որ ասիկա ըսողը հայ ժողովուրդէն ընտրուած Պատրիարք մըն է, որուն ձեռքը կայ բաւականաչափ գործեր. որուն վրին դրուած են որոշ պարտականութիւններ առ ազգը, առ հայ ժողովուրդը։

Հայ լուսամիտ մամուլը յաճախ խօսեր է հայ հոգեւորականութեան ընկած, անբարոյականացած վիճակին վրայ, բայց մենք վստահօրէն կը պնդենք որ եւ ոչ մէկ քարտաստիճան հոգեւորական հասած է այն մերկապարանոց լրբութեան, որ եկեղեցիին բեմէն առանց քաղաքակիրթ ոճի յանդգնօրէն ոտքի տակ առնել ջանայ իրեն ընտրող ժողովրդին իրաւունքները։

Քարոզի միւս պժգալի միտքն ալ քար մըն է նետուած ամէն դասակարգի ազգային գործիչներու հասցէին։

«Ի՞նչ է, կուզէ ըսել Օրմանեան. ժողովուրդ, ազգ. հասարակութիւն, ամէն մարդ իրեն համար թող մտածէ. լոկ իր անձին համար թող աշխատի... բժի՛շկ, բժշկեա՛ զանձն քո»... Ա՛ս եսականութիւնը ու եսականութեան ձայնն է որ կը բարձրանայ նոյն իսկ հայ եկեղեցիի բեմէն։

Որչափ հայ հոգեւորականը կաշառակեր, խաբեայ, ստախօս, զըրպարտիչ, անբարոյական է եղեր. որչափ նա ստորնացած ազտերու մէջ թաթախուած է եղեր՝ այնուամենայնիւ ան չէ յանդգներ եկեղեցիի բեմն ելլալ ու անկէ քարոզել բացարձակ անտարբերութիւն մը, սեւ ու քարասիրտ եսականութիւն մը։ Բեմն ելած ատենը, էն ստոր, էն աղտոտ հոգեւորականն անդամ անհրաժեշտ համարուած է չը պատուել եկեղեցիի այդ վերջին քարը. Աւետարանի մարդասիրութեան, ընկերասիրութեան սկզբունքը...

Դէթ անկէ իրար օգնելու, իրար բռնելու, իրարով հետաքրքրուելու միտքն է քարոզեր։

Իսկ այսօր Օրմանեան այդ դարաւոր աւանդութիւնն ալ ոտքի տակ առած եկեղեցիի բեմէն անտարբերութիւն, եսականութիւն ու լոկ անձնապաշտպանութիւն կը քարոզէ։

Վա՛յ, վա՛յ, վա՛յ ի՞նչ օրերու հասանք։

Քարոզին տպաւորութիւնը սարսռեցուցիչ ու պժգալի էր. ամէն հայ, որ լսածը հասկնալու կարողութիւն ունի, զզուանքով կը խօսի այդ քարոզի մասին։

Կեցցե՛ս Օրմանեան...

* * *

Բարեհորոգումներ նուիրող իրաւէն արդէն 15 օր է պաշտօնապէս հաղորդուած է գաւառներու իշխանութիւններու ի գործադրութիւն։

Ասուած տայ գործադրուին... թէեւ մենք չենք հաւատար։ Թուղթը թուղթ ալ կը մնայ։

Վերջին շաբաթներս Պոլսոյ հայ վաճառականներու մէջ սնանկացողներու թիւը զգալի կերպով կը շատանայ։

Հազիւ 8—9 օր առաջ Կիւմիւշեանն էր որ «թոփ նետեց» երկու երեք օր առաջ ալ Ինճիճեան եղբայրներու յայտնի վաճառատունը։ Նանկ հրատարակուեցաւ...

Ասոնց պիտի յաջորդեն ուրիշներ ալ։

ԲԱԺ

ԹԱՒՐԻԶ, 12 Հոկտ.

Թաւրիզը իրա յառաջդիմութիւնը մեծ մասամբ պարտական է Դաշնակցութեան։ Դպրոցական հիմնարկութիւնները, Բարեգործական ընկերութիւնները, մանկապարտէզը և կարուձեւի արհեստանոցը, ընտանեկան կարգ ու սարքի, վարք ու բարքի բարեշրջումը Դաշնակցականների շնորհիւ են կատարվել։ Որովհետեւ, Դաշնակցութիւնը Պարսկաստանում, և մասնաւորապէս Թաւրիզում հիմ դնելով, գաղափարական երիտասարդութեան աղնիւ, պարտաճանաչ և զարգացած մասին մուտք գտնելուն պատճառ դարձաւ. սրանք անձնուիրաբար ու գիտակցաբար ծառայեցին Թաւրիզի հայ հասարակութեան լուսաւորութեան և յառաջդիմութեան գործին։

Երբ դեռ այս երիտասարդութիւնը մուտք չէր գտած Թաւրիզ, ընտանեկան ներքին և արտաքին կեանքը բնաւ մահմեդական կեանքից չէր տարբերվում. կանայք տղամարդկանց ներկայութիւնից խոյս էին տալիս, ստեղծելով կատարեալ մահմեդական դրութիւն։

Բայց այսօր, շնորհիւ Դաշնակցականների, մեծ մասամբ կանայք տղամարդկանց հետ նստում ու խօսում են, և տղամարդ հիւրերին ընդունում, յաճախում են թատրոններ, լսարաններ և ժողովներ։ Վերջապէս 8—10 տարվայ ընթացքում տեղական հայ կեանքում մեծ փոփոխութիւններ են յառաջացել, և այդ էլ միմիայն շնորհիւ «օտար»ների, ինչպէս տգէտ-իմաստակները սովոր են կոչել...։

* * *

Անհատական գործերի և խընդիրների մէջ մենք յաճախ պատահում ենք իրար հակասող երեւոյթների. այդ անշուշտ մի ցաւալի իրողութիւն է, սակայն յաճախ մենք դրանով չենք հետաքրքրվում, լոկ անհատական գոյն և բնաւորութիւն ունենալու համար։ Շատ շատ արդարացնում կամ արհամարում ենք այն անձերին, որոնք յեղյեղուկ բնաւորութեան տէր են։

Բայց խնդիրը տարբերվում և մեզ շահագրգռում է, երբոր այդ հակասական երեւոյթը տեղի է ունենում հասարակական շրջաններում, ազգային պաշտօնական մարմինների մէջ։ Այս պարագաներում, անհատը (որը որ և է պաշտօն է ստանձնել հանրային գործերը վարելու) երբեք իրաւունք չունի հակասելու, իր անձնական գործերի նման վարելու հանրային գործերը և ինքնիրան անպատասխանատու կարծելու։

Անհատը ազատ է իր տան ծառային արտաքսել շատ փոքր պատճառների համար և կամ առանց պատճառի. ոչ ոք իրաւունք ունի նրա այդ վարմունքը քննադատելու. սակայն այդ միեւնոյն անհատը չէ կարող որ և է մի հանրային պաշտօնեայ զրկել իր պաշտօնից առանց բանաւոր և օրինաւոր պատճառների. և կամ սրա հակառակը, այդ պատճառներով պաշտօնից զրկած մի պաշտօնեային, չէ կարող նորից պաշտօնի կոչել։ Այս հակասական ընթացքը անշուշտ վնասակար է հանրային տեսակէտից։

Մենք հայերս, տակաւին չենք որոշել մեր պարտականութիւնները և պատասխանատուութեան սահմանները հանրային գործերում. երբ մի հանրային գործի գլուխ ենք անցնում, գործում ենք այնպէս, որպէս մեր անհատական գործերում, հետեւում ենք մեր կապրիզներին, կամայականութեան, եսականութեան, անձնական ատելութեան կամ համակրութեան, վերջապէս, մի խօսքով մեր «քէյֆին»։։։ Եւ ահա այս պատճառներով մենք շատ յաճախ պատահում ենք հակասութիւնների հասարակական գործերում։

Թաւրիզում տեղի ունեցած այս հանրային հակասական երեւոյթներից ամենատխուրները կը յիշենք միւս նամակում։

ԳՆԴԱԿ

ՊՈՍԴՈՆ, 25 Հոկտ.

Ցուրտ եղանակը ամերիկահայուն ժողովներու ժամանակն է։ Մենք զուրկ ենք դպրոցներէ և մեր ուսանելու միակ միջոցը ժողովներն են. ատ պատճառաւ ալ հոս աւելի շատ ժողովներ տեղի կունենան քան ոևէ հայ գաղթականութեան մէջ։

Մեր լսարանները կը ծառայեն մեր մտքի մշակման. մեծցած մանուկներ ենք մենք բայց, ուսանելու սորվելու բաղձանքը մնռած չէ մեր մէջ և այս շատ մխիթարական է։ Վերջին նորութիւնը հայ կանանց հրապարակ իջնելն է. դեռ թուով շատ փիչ ասենք ալ ոկսեցին ընկերութիւններ կազմել, հրապարակային ժողովներ ընել և օգնել ազգային վերածնման գործին։ Պոսդոնի և շրջակայից հայուհիներ միութիւն մը կազմած են որոնք իրենց հիմնադրութեան հանդէսը տուին չքեղ կերպով։ Ինչ որ ինձ կը հետաքրքրէ իրենց նպատակն է։

Կազմակերպութիւնը պիտի ջանայ հայ կանայք իրարու ծանօթացունել, տանտիկնութեան անվարժ եղողներուն «ելիել թափել» սորվեցունել, տան մաքրութեան հսկել, կարօտելոց ըստ կարի օգնել և հայ մանուկներուն հոգ տանիլ որ մայրենի լեզուն ուսնին։

Այժմ 29 անդամուհիներ ունի ընկերութիւնը, և եռանդով կը գործէ։

Կը գործեն նաեւ յեղափոխականները. և զարմանալին ան է որ անոնք որոնք տարի մը առաջ հայկական ջարդերը Ամերիկայի մէջ տեղի ունեցած հրապարակային ժողովներու կը վերագրէին. «մեր ժողովներով Սուլթանը գրգռեցինք ու ան բարկութիւնը անոնց մեղներու գլխուն թափեց»։ կապակէին, բուն անոնք են որ այսօր եռանդով մը ժողովներ կը սարքեն ու կը քարոզեն։ Եթէ այս պարոններ իրենց համոզման անհիմ ըլլալը հասկցան, Սուլթանական ջարդերու իսկական պատճառները ըմբռնեցին և այսպէս կրկին հրապարակ ելած են գործելու. կը շնորհաւորեմ զիրենք։ Իսկ եթէ ըրածնին անգիտակցաբար շարժում մըն է իրենց կը յիշեցունեմ անիմաստ ազգակները որ կը բարձրացունէին յեղափոխական ժողովներու դէմ և որոշ կրսեմ մի գործէք ձեր սկզբունքին հակառակ։

Պատճառներ ունիմ հաւատալու թէ «Ազգային Հնչակեաններ» որոնք դէմ էին ժողովներու ու այսօր իրենք ժողովներ կրնեն, իրենց սխալը հասկցած են։ Փորձով տեսան թէ լռելով, ղէնքը վար դնելով. Սուլթանին բարեացակամութեան վստահելով ազգը կը տուժէ. Եվրոպի գնդան իր կոտորածներէն ետ չի կենար, անոր հետ կռուիլ պէտք է անընդհատ։ Ցանկալի է տեսնել որ ասոնք խօսքի ասպարէզէն գործի դաշտ յառաջանան ու կսին իրական յեղափոխականներ ըլլալ։ Ալ կը բաւէ սին յոյսերով ապրիլ։

Յեղափոխական կազմակերպութիւններու սարքած ժողովները այժմ աւելի մեծ տպաւորութիւն կը գործեն ժողովրդի վրայ քան ասկէ առաջ. այժմ ամէն հայ զգացած է, քիչ կամ շատ, իր ցաւի խորութիւնը և ամէնքս ալ հասած ենք այն եզրակացութեան թէ՝ մեր փրկութիւնը մեր ձեռքն է։

Դաշնակցականներու և Հնչակեաններու եռանդուն գործունէութիւնը իր օգտակարութիւնը և արդիւնքը կուտայ. միայն մէկ խօսք կազմակերպութեանց երկուրին ալ—չանցէք ժողովրդին հոգի ներշնչել մի վհատեցունէք զայն։

Լ.Ի.Օ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ուշագրաւ պարագայ մը ունիմ այսօր ձեզի աւետելու. Աղեքսանդրիոյ պաշտօնական մարմինը չօշափելի փաստ մը հրապարակ կը նետէ ցուցնելու համար իր յարումը ազգային օրէնքին, այն է մեր սահմանադրութեան, որուն տրամադրութիւնները յարգելու մասին այնքան ըմբոստ գտնուած էր մինչեւ վերջերս։ Հաւատա՞նք սակայն թէ այդ յարումը անկեղծ է եւ ո՛չ թէ նորոգ արհամարհանք մը ժողովրդին երեսին։ Իրողութիւնը սա է թէ Աղեքսանդրիոյ թաղ. խորհուրդը ազգային տուրք սահմանած ըլլալուն մասին շրջաբերականներ հրապարակեց քանի օր առաջ, որոնց մէջ կակնարկէ թէ «պարտուց եւ իրաւանց գիտակցութիւնը անխուսափելի հարկ մը յառաջ կը բերէ ազգ. տրոց սահմանման, որոնց արդիւնաւորութենէն, կախում պիտի ունենայ տեղական ազգ. գործոց եւ հաստատութեանց կանոնաւոր գնացքն եւս քան զեւս բարելաւ վըճակը»։ Դժբաղդաբար ներկայ թաղ. խորհուրդը որ անկեղծօրէն փնտռել կուտայ մեզի նախորդը՝ զոր սակայն տապալելու համար ջանք չը խնայուեցաւ, իր ուղղութեանը մէջ այնքան ներհակ է սահմանադրական սկզբունքներու որ ժողովուրդը հեզնութեամբ միայն կընդունի իր շրջաբերականները։

Այնքա՛ն պարտաւորութիւններ կը ծանրանան խորհրդին վրայ, ցոյց տալու համար իր յօգուտ հանրութեան գործունէութիւնը, որ ահագին անդունդ մը կանջատէ զինքը ժողովրդէն, որն որքան ալ գիտակից իր պարտաւորութիւններուն, իրաւունք ունի բացարձակօրէն թերահաւատ ըլլալու թաղ. խորհրդոյ սոյն յայտարարութեան, քանի որ իր կազմութենէն մինչեւ այսօր հիւլէի չափ օգտակար չէ եղած տեղւոյն ազգ. շահերուն, այլ բոլորովին հակառակը՝ քանդիչ ուղղութեան մը հետեւած է, աւերելով, բարեկարգելու քողին ներքեւ. ամէն ինչ որ նախորդ թաղ. խորհրդոյ օրով կատարուած էր։ Թաղական խորհրդոյ նեկայ փոխ-տեղապետին խուլ տեսութիւնը ազգ. վարժարանաց տնօրինութեան եւ հոգաբարձութեան դէմ, ինչպէս տեղւոյս աղքատախնամ Բարեգործական ընկերութեան ներկայ վարիչներուն դէմ. ամենէ աչքի զարնող զգացումներն են որոնցմով անընդհատ զինուած է թաղ. խորհուրդը ժողովուրդը՝ նախատելու եւ անոր իրաւունքները չը ճանաչելու վերաբերմամբ։

Ներկայ շրջաբերականներուն ոգին ըմբռնելու համար ժողովրդին զգացումները չատ խանդավառ են, այլ սակայն ժողովուրդը սկզբունքով ներկայ թաղ. խորհրդոյ կազմութիւնը չճանչնալուն, իրաւունք ունի նշանակէտի մը չափ իսկ կարեւորութիւն չընծայել փոխ-տեղապետի ստորագրութեան որով կնքուած են այդ շրջաբերականները։ Ժողովուրդը ցարդ սպասեց որ լսէ ընտրողական ժողովոյ տեղեկագիր մը որ հաստատէ իր կազմութիւնը. դժբաղդաբար ամիրայական արմատացած բարքերու տիրապետութիւն մը ժողովրդին այդ իրաւունքը առաթուր կը կոխէ։ Ընտրողներու թուոյն խիստ սահմանափակումը արդէն ցոյց տուաւ նորեկ հաստատողներուն թէ Եգիպտոսի հայութիւնը ինչ պատուով ընդունած է զիրենք. բայց ամենէ տրտաղոց պարագան սա է թէ մինչեւ Աղեքսանդրիոյ մէջ (որ գէթ յաչս Պատրիարքարանի Գահիրէի վարչութեան կցուած է) կը մերժուի քուէի իրաւունքը եղեք տարիէ ի վեր հաստատուողներուն, Գահիրէի երեսփոխանական ժողովը՝ կեդրոն վիճակային գործոց իր քուէով քաղաքական ժողովոյ անդամ կը կարծէ։

ՎԻԼՀԵԼՄՍՏՕՐՖ, 17 Հոկտ.

Ցարատեւենք և զիրար սիրենք.

Երբ փօսաը մեզ ամերիկեան հայ թերթեր կը բերէր, իրարու ձեռքէ յափշտակելով կը կարդային մեր քոյրերու յօդուածները. բնայց ցաւալի է տեսնել որ ասուպի մը նման իլան հրապարակ և անհետացան։

Հոս կը սարսափիմ յարգելի ուժգնիչիս առածը կրկնել, որ կըսէր. «Հայոց պէս սկսիլ և Անգլիացւոց պէս վերջացունել»։ Գովելի է, հայերը շուտով կը ձեռնարկեն գործի մը և եռանդով կը գործեն, բայց յարատեւե՞լ, այս շատ անգամ կը պակսի մեզ։ Ինչո՞ւ այսպէս ըլլայ. ո՞ւր են մեր քոյրերը, ինչո՞ւ համար հրապարակ չեն իջնար։ Միթէ՞ քննադատելէ կը վախնան։ Ո՛չ, սիրելի քոյրեր, մի վախնաք, այլ յարատեւեցէք ձեր սկսած գործին մէջ. գրեցէք ընտանեկան կեանքէ. ամէն ոք իր կարողութեան չափով և մենք ղանոնք միրով և յարգանքով պիտի կարդանք։ Ձեր լոյսը մի պահէք։ Լուսաւորեցէք հայ կիներու մըտքերը։ Մօտեցէք լրագրութեան և յարատեւեցէք ձեր սկսածը։

* * *

Հայ թերթեր նոր թերթի մը լոյս տեսնելն ուրախութեամբ կը յայտնեն ընթերցողաց, բայց չեն յարատեւեր իրենց այս լաւ ճամբան ընթանալ. և քիչ ատենէն իրարմէ գժգոհ՝ թշնամական դիրքեր բռնելով՝ իրարու դէմ անվայելչութեամբ կը կռուին։ Իրաւի ցաւօք սրտի կը գրեմ զայն, բայց ճշմարտութիւն մըն է։ Հայ թերթեր փոխանակ իրարու ըսելու՝ «ձեռքդ տուր եղբայր, առաջդիմութեան ուղիէն ընթանանք». զիրար կը նախատեն և չեն ուզեր գոնէ զիրար իրենց թերթերու անուամբ կոչել։ Եւ օր աւուր, նոր գիւտեր ըրածի պէս, ստորին անուններով զիրար կը մկրտեն. զոր օրինակ՝ «Շտեմարան անպիտան գիտելեաց», «զրպարտիչ», «հայերէն տառերով հրատարակուող» (կարծես ճարոնական և կամ չինական տառերով հայ լրագիր հրատարակուի) և այլն։

Ընթերցո՛ղ, քեզ կը յանձնեմ, դու դատէ, այս սին վէճերը ուսկի՞ց յառաջ կուգան։ Ես կըսեմ՝ «անձնական կիրքով», «ես»ով և «կոյր կուսակցամոլութենէ»։

Բայց ինչո՞ւ այդպէս ըլլայ. միթէ մենք մէկ ազգի զաւակներ, եղբայրներ չե՞նք. միթէ մենք միւնոյն թշուառ հայրենիքի համար չե՞նք աշխատիր։ Զգենք այս փուճ վէճերը, վերջ տանք այն տեսակ բաներու որ գմնզ դէպի կորուստ կառաջնորդէ։ Զգենք սին վէճերով, անձնական անարգանքներով թերթեր լեցնելը և զբաղինք մեր ազգին ցաւերով։ Ասով ըսել չեմ ուզեր որ չը քննադատենք. ո՛չ, քննադատենք, բայց անձը և սկզբունքն իրարմէ զատենք։ Մեր քննադատութիւնը չինիչ ըլլայ, ոչ թէ աւերիչ։ Ըլլանք անկողմնակալ, բանանք մեր թերթերու սիւնակները ազգօգուտ գործերու առջեւ (հա պարտք կը համարիմ ըսել թէ այս մասին «Շարժումի» բռնած ընթացքը գովելի է հրատարակելով երկու կողմի վիճաբանողաց գրութիւնները, հարկաւ եթէ ազգին շահին օգուտ մը ունին)։

Որչափ կուրախանամ երբ գերման թերթերը կը կարդամ, որոնց մէջ դեռ բնաւ չեմ հանդիպած փուճ վէճերու, այլ միշտ իրենց երկրին օգտին կաշխատին։ Երանի թէ մեր թերթերն ալ օրինակ առնէին անոնցմէ և իրար անարգելու տեղ եղբայր անուանելով՝ ձեռք ձեռքի բռնած մեր տառապեալ ազգին շահուն աշխատէին։

Աններելի է Ամերիկայ, ազատ երկրի մէջ, ապրող երիտասարդաց (բացառութիւնք յարգելի են) փուճ պատճառներով զիրար կը նախատեն «հնչակեան» և «Դրօշակեան» անուանելով. ուստի կը հարցնեմ ձեզ, պարոններ, ամո՞թ է միթէ յեղափոխական ըլլալ և «Հնչակեան» կամ «Դրօշակեան» ըլլալ։ Ո՞չ։ Ամէն մէկ պարտաճանաչ հայու գործն է այս սուրբ գործին՝ յեղափոխութեան փարիլ և ջանալ զայն առաջ տանելու համար։ Մեր նպատակն ըլլալու է ազգասէր և ճշմարիտ և անձնուրաց յեղափոխականներ ըլլալ և ատել մեր «ես»ը։ Հետեւինք Պետոներու, Աբրօներու, Աւօներու, Սերոբներու, Արաքելներու. անոնց գծած ուղիէն երթանք, չըլլանք կուսակցամոլներ այլ միր գործիչներ. Զատենք զիրար, այլ սիրենք։ Ամօթ է մեզ, վերջ տանք այսպիսի եղբայրասպան գործերու և մեր ուժը ամփոփելով կռուինք մեր արիւնարբու թշնամիին դէմ, որ միշտ ազգին կործանման կըսպասէ։

Այո՛ ձեռք ձեռքի տանք համախմբուինք յեղափոխական սուրբ դրօշին տակ և ընթանանք մեր կարապետներուն յառաջացած ճամբայէն որով միայն պիտի կարենանք մեր սրտի բաղձանքին հասնիլ...

Եւ եթէ կը գտնուին մեր մէջ այնպիսի ստորաքարշ սողուններ, որոնք միշտ թշնամական սերմեր կը ցանեն. վռնտենք զանոնք մեր ընկերութիւններէն, խայտառակենք այդ անպիտանները և թող ճշմարտասիրութիւնը ու անկողմնակալութիւնը ըլլայ մեր բնաբանը։

Ահա մեր աչքին առջեւն է օրինակն, Անգլիոյ բաղկատարած տէրութիւնը։ Բայց կը տեսնենք որ երկու փոքրիկ տէրութիւնք Օրանժ և Թրանսվալ մրացած կը չախչախեն անգլիական զօրքերը... և այսպիսի օրինակներ կարծեմ հաղուագիւտ չեն։

Երկու խօսք ալ «Ձայն Հայրենեացի» թղթակից Պ. Շահէնի. Պ. Շահէնի «Ձայն Հայրենեացի» 7րդ թիւին մէջ Պ. Մարգսկէսեանի վարդապետ ըլլալու մասին գրելով կը պաշտպանէ զայն. այդ լաւ, բայց յետոյ կը յարէ «երիտասարդ վարդապետ մը (երջանկայիշատակ Տէր Վաղինակ վարդապետ) մտերմօրէն, խոստովանեցաւ որ քանի մը հարիւր տոլարներ պարտ ունի... մինչ մահուանէն յետոյ 600 տոլարներ գտնուեցան... բայց կը խնդրեմ Պ. Շահէնի, ըսէք տեսնեմ, արդեօք գիտէ՞ք այն յեղափոխական վարդապետի մտադրութիւնը. կարծեմ ոչ, եթէ գիտնայիք այնպէս չպիտի գրէիք։ Յեղափոխական խումբի մը գլուխ անցնելով Հայրենիք երթալ ինչո՞վ կըլլայ, սակով։ Ուստի կը խնդրեմ որ այն յեղափոխական վարդապետին անցեալին և իր մտադրութեան ու բաղձանաց տեղեակ ըլլալու համար կարդաք «Հայրենիքի» այն թիւերը և մասնաւորապէս ձեզ կը յանձնարարեմ կարդալ «Շարժումի» 159 թիւը, որուն մէջ իր աշակերտը Պ. Մարգպետունի համառօտ նկարագրած է։

Հանգիստ թողէք այդ Հայրենիքի անձնուրաց զաւկին ոսկորները։

* * *

Ուրախութեամբ կուգամ «Շարժումի» յարգոյ ընթերցողաց իմացնել որ, նամակի մը պատճառաւ բանտարկուած հայը ազատ արձակուած է, ամիս մը բանտը ճգնելէ ետքը։

ԴԵՂՈՒՆԻ

——).(——

գէ բոլորովին նորեկ մը, Տ. Արմենակ Պէյլերեան, որուն արժանացը համապատասխանողներ սակաւաթիւ չեն Աղեքսանդրիոյ մէջ՝ երկար ատենէ հաստատուած։ Բայց «փաշան ատանկ ուզեց, փաշան այդպէս անօրինեց» քաղաքականութիւնը որուն դէմ ամենէ կատաղի յարձակողներէն մին կը ձեւանար ներկայ Թաղ. խորհրդոյ փոխ-ատենապետը՝ Տիար Արմենակ Կամսարական, պաշտօնի կլուբի անցնելէ վերջ։ Իր պակին տեսութիւնները (!) «մոլութիւնները փայփայելէ զատ, ոեւէ ազգօգուտ ընթացքի մը մէջ չէ գտնուած։» Եւ հիմա կուզուի որ ժողովուրդը իր պարտքը ճարչնայ, երբ այդ ժողովուրդը տարիներէ ի վեր գիտակցութիւնը ունի թէ իր իրաւունքները կանտեսուին ու կը խորտակուին։ Լաւագոյն պիտի ըլլար որ Տ. փոխատենապետը ուսումնասիրէր թէ ինչո՞ւ համար Գահիրէի մէջ անգործաղրելի մնաց ազգ. տրոց հաւաքման գործը, հա՛ն ուր ժողովուրդը աւելի հարուստ ու բարեկեցիկ է։ Որքան ատեն որ Սահմանադրութիւնը կուզուի գործիք ընել, ժողովուրդը որ հոգւովը փարած է անոր սկզբունքներուն, որոնք իր գոյութեանը միակ երաշխիկը կը մնան, պիտի ըմբոստանայ պահանջելով նախ եւ առաջ իր իրաւունքներուն ճանաչումը։ Պարտուց եւ իրաւանց գիտակցութիւնը փոխադարձ սերտ կապերով կապուած է. երբ Սահմանադրական սկզբունքներու հետեւողութիւն մը կակնկալուի ժողովրդէն, ակնկալող մարմինը թող նախ ցոյց տայ ժողովրդին իր պարտուց գիտակցութիւնը։

Թաղ. խորհուրդ մը կը հրաժարի առանց ներկայացնելու իր համարաւորութիւնը՝ ժողովրդին։

Թաղ. խորհուրդ մը կը կաղմուի կամայական ընտրութիւններով առանց իր կազմութիւնը հաստատող տեղեկագիր մը ներկայացուելու եւ գերագոյն մարմինէ մը վաւերացուելու։

Հրաժարեալ Թաղ. խորհրդոյ հաշիւները կը քննուին յաջորդող Թաղական խորհրդոյ երկու անդամոց երկու մասնաւոր fարsուղարներուն միջոցաւ, առանց հրաժարեալ տարրէն ներկայացուցիչ մը հրաւիրելու. եւ այն ալ լոկ թուանշաններու ճշտութեան քննութիւն, եւ ո՛չ թէ մսխուած գումարներու իրաւատութեան կամ բարւոք մատակարարութեան քննութիւն։

Թաղ. խորհուրդը կոչում կընէ ժողովրդին որ Թաղին մանուկները յաճախեն ազգային վարժարանը, երբ նոյն խորհրդին փոխ-ատենապետը սանձարձակ կը յայտարարէ ամենուրեք թէ ինքը առաջինը պիտի ըլլայ միշտ իր զաւակները օտարին զրկող, առանց սակայն պարզելու այն պատճառները որոնք կարդարացնեն իր արարքը. ցաւալին մանաւանդ այն է որ հոգարարձութիւնը իր մէջ ունի գրագէտ անդամ մը. Տ. Տիգրան Կամսարական՝ որուն աշնիւ խորհրդին փոխ-ատենապետը պէտք էր առաջինը ըլլալ անսացող։

Վարժարանաց քննութիւնները կը կատարուին եւ փոխ-ատենապետը ի պաշտօնէ յայտարարելով հանդերձ թէ Թաղ. խորհրդին պարտքն է ամբողջութեամբը ներկայ գտնուելով քաջալերել ուսանողները, ձեռքի տակէ կարդիլէ իր պաշտօնակիցները ներկայ գտնուելու քննութեանց, որովհետեւ անօրէնը ամենուն կողմանէ յարգուած անձնաւորութիւն մը, Տ. Յակոբ Պէկարեան, հին պատուելիներու պէս իր տկար կողմերը չոյողներէն չէ բնաւ, այլ ընդհակառակը՝ մեր այն հազուագիւտ ուսուցիչներէն. որոնք իրենց կոչմանը վեհութեան խորին գիտակցութիւնը ունին եւ չեն ստորնանար հարուստներու առջեւ։

ԽՃԻԿ

(Մնացածը յաջորդով)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Անցեալ օր պատահմամբ ձեռքս անցաւ, թէև քիչ մը ուշ, «Իրաւունք»ի վերջին թիւերէն մէկը որ, Ֆիլիպէէն Գ. ստորագրութեամբ յօդուածագիր մը անձիս նկատմամբ մէկ քանի ափեղ ցփեղ տողեր գրած էր։

Լոկ անձիս շուրջը դարձող խնդիրներու համար թէեւ երբեք չեմ ուզեր գրիչ խաղցնել, և սակայն, լռութիւնս ալ սրպէսզի, շատ անգամներ պատահածին պէս, այլանդակ մեկնութեանց տեղի չտայ, կուգամ, առաջին և վերջին անգամ ըլլալով, հրապարակաւ յայտարարել թէ՝ հակառակ «Իրաւունք»ի այդ ապուշ տեղեկատուին գրածներուն՝

1. Ես ժամանակէ մը ի վեր դադրած եմ ուեւէ թերթի հետ յարաբերութիւն ունենալէ։

2. Հետեւաբար չեմ կրնար Ֆիլիպէի հոգաբարձութիւնը շողոքորթած ըլլալ, և պէտք ալ չունիմ։

3. Գ. Գ.ի յիշած թղթակցութեան մէջ երեւցած գովասանքները չեն կրնար ինձի վերաբերիլ այն պարզ պատճառով որ, այդ միջոցին, ես Ֆիլիպէի ուսուցչական խմբին մասը չէի կազմեր։

4. Գ. Գ., զուր փորձած է.ք ինքզինքիդ մխիթարել կարծելով թէ ես իբր «օգնական ուսուցիչ» կը պաշտօնավարեմ հոս. չարաչար կը խաբուիք։ Ես «մնայուն ուսուցիչ» եմ. մեր խմբէն իւրաքանչիւրը իր յատուկ դասախօսութեանց ճիւղերն ունի, զորս կը դասախօսէ ամենէն ստորին կարգերէն՝ մինչեւ ամենէն բարձրագոյնները։ Վարժապետական տիրապետութիւնը մեր խմբին մէջ երբեք մուտ չէ գտած և չի կրնար գտնել։

5. Գ. Գ., ով որ ալ է.ք, վստահ եղիք որ կեանքիս մէջ գովասանքի պէտքը չեմ զգացած մինչեւ այսօր. և ամենափոքր ճիգ մը անգամ չեմ կատարած ոեւէ բերնէ գովասանք խլելու, որովհետեւ վստահ եմ որ գովասանքը ինքնին պիտի գայ եթեւէս, եթէ գովուելու արժանի.ք մը ունիմ արդէն։ Ու խորապէս համոզուած եմ որ լուրիկ ջանքերու մէջ արտայայտուող աշխատութիւնը՝ որ յանուն պարտքի ու ճշմարտութեան անվեհեր յանձն կառնէ ամէն նախատինք ու հալածանք, շատ աւելի անձնուիրութիւն ու վեհութիւն ունի իր մէջ, քան թէ ի լուր աշխարհի հռչակուած ամենամեծ քաջագործութիւնները։

Արդ՝ այս բացայայտ ու յստակ յայտարարութենէս ետքը, ի՛նչ ալ գրէ.ք, կրնա.ք վստահ ըլլալ որ անպատասխանի պիտի մնայ, որովհետեւ լրագրութիւնը լոկ իմ անձիս համար շահեկանութիւն ունեցող ոեւէ խնդրով զբաղեցնելը՝ լրագրական կոչումին մէջ մեծագոյն մեղանչանքը կը նկատեմ, և ի սպառ համոզուած եմ որ. ձեր բոլոր գրածները անհատական հաշիւներու արդիւնք են լոկ։

Լեւոն Սարգսեան

Փ. Պոլիս, 22 Հոկտ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պէյրութի Ահմէտ պէյը Ըսլահ անունով թերթ մը հրատարակեց՝ որուն ոչ թէ աշխատողներէն մէկը՝ այլ խմբագրապետը հայ էր։

Թրքական խորշակը երբեմն Պալքաններու վրայէն ալ կը փչէ. փչեց եւ Ըսլահը խմբագրեցոյց։

Քաղաքական հաշիւը մարդս ստորնացուցէ չգաստեր. Հանրթոն, Քոնթանը դատապարտող Պուլկար մամուլը—առանց բացառութեան—այս մասին ի՞նչ լեզու պիտի գործածէ կը սպասենք։

Ըսլահին խմբագրապետը
ԶԻՒՄԲԻՒՏ

Բլէֆնայ, 19 Հոկտ.

ՔԱՌԱՄՍԵԱՅ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԱՂՔ. ՄԱՍՆԱԽՄԲԻ Փ. ՊՕԼՍԻ

—

Յունիս 1էն մինչ 30 Սեպտ. 1899

ՄՈՒՏՔ	Ֆ. Ս.
Շաբաթական գանձանակէ գոյացած հասոյթ	283.80
Մասնակի հանգանակութենէ մը	24.—
Տիկին Եղ. Թէրզեանի ձեռամբ մի քանի տիկիններէ	26.—
Նուիրատուութիւն	2.60
Նախորդ հաշուեկշիռէն գանձապետին քով պատրաստ դրամ	40.80
Գումար	377.10

* * *

ԵԼՔ	Ֆ. Ս.
Աղքատներու շաբաթական նպաստ	137.—
Աղքատներու շաբաթական հացագին	48.20
Աղքատներու ճամբորդութեան համար նպաստ	40.—
Աղքատներու զանազան նպաստ	7.50
Հիւանդի մը կաթ եւ միս	3.—
Աղքատ տիկինի մը եռամսեայ տան վարձք	18.—
Դեղերու	24.80
Բժշկի համար կառքի վարձք	2.—
Գանձանակը պտցնողին շաբաթական վարձք	34.—
Գանձանակը պտցնողին նուէր իր անձնուէր ջանքին համար	8.—
Թղթատար	—.30
Գանձապետին քով պատրաստ դրամ	54.30
Գումար	377.10

* * *

Այս առթիւ մեր ջերմ շնորհակալութիւնները կը յայտնենք բոլոր այն անձանց որոնք նիւթապէս եւ բարոյապէս օժանդակեցին մեզ ազգային օգտուէր այս ձեռնարկին մէջ։

Մնամ յարգանօք
Ի դիմաց Աղքատախնամի
Ատենապետ Ատենադպիր
Գ. Ա. Դաւիթեան Ա. Յ. Սրվանեան

Փ. Պոլիս, 10 Հոկտ.

——).(——

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Քաբէն կը հաղորդեն որ Պաղուներբա ապստամբներ են Հարաւային Ափրիկէի «Նկատ ՊեռուԹեան» դէմ։ Սակայն Քաբի կառավարութիւնը այս լուրը հաստատող տեղեկութիւններ չունի։

— Պօէրները առած են Կոլէսպէրկ և Կոլէնսօ քաղաքները։

— Ռուսաստանէն Կովկասը մասնաւորապէս պիտի մասնակցի 1900ի Բարիզի ցուցահանդէսին. անշուշտ Կովկասի հայերէն շատ մասնակցողներ պիտի ըլլան։

— Անգլիական ժողովրդային երեսփոխաններէն Պ. Տուխտ Անգլօ-Թրանսվալեան պատերազմը ներկայ դարուս էն մեծ յանցանքը համարելով, իբր բոլոր ատոր դէմ, պիտի հրաժարի իր ունեցած լիազօրութիւններէն։

— Անգլիա Միացեալ Նահանգներու միջոցաւ դիմած է Թրանսվալին խնդրելով որ վերջինս ամէն շաբաթ ճիշդ տեղեկութիւններ տայ անգլիացի գերիներու թիւի մասին։

— Պերլինի մէջ ընկերվարականները ցոյց մը ըրած են յօգուտ Պօէրներու, ցոյցին մասնակցած են 4000 այր և կին. որոշում արուած է համակրութիւն յայտնել և հանգանակութեան սկսիլ վիրաւորեալներու համար։

— Վեյլսի մէջ պուլկարները դժգոհութեան ցոյցեր ըրած են թուրք կառավարութեան դէմ, Մարպիական վարժարանին վերաբացուելուն պատճառաւ։

— Ֆրանսական թերթ մը կըսէ թէ, եթէ Գերմանիա առաջարկէր լուրջ քայլ մը ընել Հարաւային Ափրիկէի մէջ ուժերու հաւասարակշռութիւնը պահպանելու համար, Ֆրանսան ոչ մի առարկութիւն կընէր, ինչպէս չըրաւ Ռուսիոյ և Գերմանիոյ միացեալ ցոյցին ժամանակ Չինաստանի ճաքոնական պատերազմին միջոցին։

— Անգլիայի երեսփոխաններէն մին, Պ. Օ. Պրէյն բարլամէնդին մէջ ըսեր է. «երբ և իցէ կախարան բարձրացած ոճրագործներէն և ոչ միոյն ձեռքերը այնչափ արատաւորուած են, որչափ Պ. Շամպրլէնինը». ակնարկութիւնը Թրանսվալի դէմ պատերազմ սկսելուն կը վերաբերի։

— Ռուսական մամուլի աղատամիտ ներկայացուցիչները համակրանքով լի յօդուածներ հրատարակած են Պ. Զանչեանի հրապարակագրական գործունէութեան 25ամեայ յոբելեանին առթիւ. անպայման անկեղծ, անձնուէր, ջերմ և տաղանդաւոր քարոզիչ մը կընդունին աղատամիտ և լայն մարդասիրական զաղափարներու։

——).(——

ԹԱՏՐՈՆ «ԱՆԿԷԼ ՍԼԱՎՈՖ»

—

«Վէսէլլօ» հայ թատերական խումբը, այս գիշեր, Հոկտ. 30, պիտի ներկայացնէ՝ ՍԱՀԱԹԷ ՎԱՍԻՅԷԹՆԱՄԷ, տրամ-գօմէտի 3 արար. և ծիծաղաշարժ զաւեշտ մը։

Վաղը գիշեր, Հոկտ. 31, պիտի ներկայացնէ՝ ԳԱՆԼԸ ՄԷՔԹՈՒՊ տրամ-գօմէտի 3 արար. և խիստ ծիծաղաշարժ զաւեշտ մը։

Գիները շատ աժան։

Ց. ՃԱՆԿԻԼԵԱՆ

——

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ
ԾԽԱՎԱՃԱՌԱՆՈՑ
Թիւ 389 Իսկիդի-փաշի

—

Կը վաճառուի ծխախոտ, բօսխայի եւ աղերսագրի ամէն տեսակ խուլեր նաեւ «Շարժում»ը։

Շարժումը կը ծախուի նաեւ Նամակատան դիմաց նոր բացուած փոքրիկ դրատունը։

Ս. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ



ԿՕՇԿԱԿԱՐ

—

Մուսաղլա, սիղանաւոր Սարգիս Դազրիեղեանի կարզը։

—

Ճաշակաւոր, տոկուն եւ ձեւաւոր կօշիկ չինել տալ ուզողը պէտք է դիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կելլայ։

Գիները խիստ դիւրամատչելի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»ի

——

Կը տպագրուին ամէն լեզուէ այբեւտոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահաղդ, ինչպէս նաեւ պրոշիւռներ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՑԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

ՊՕՐՍԱ

—

Վառնա 30 Հոկտեմբեր

—

Վաճառ	Լիպրա	Ֆրանք	
ՊՈՒՂՏԱՑ	53—57	9 20—10	
ՄԻՍԻՐ	—	—	եօղ
ԱՐԲԱ	—	—	»
ԵՈՒԼԱՖ	—	—	»
ՖԱՍՈՒԼԵԱ	—	—	»
ՏԱՐՐ	—	—	»

Առապա	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՑ	55—60	9 50—11
ԱՐԲԱ	38—44	6.50—7.40
ԵՈՒԼԱՖ	35—36	5.20—5.30
ՄԻՍԻՐ	55—57	6—7
ՏԱՐՐ	55—58	5.50—60
ՖԱՍՈՒԼԵԱ	100 ֆիլ.	12—20

Հէր կիւն կելլեն մալ

ՊՈՒՂՏԱՑ	150—200	առապա
ԱՐԲԱ	25— 30	»
ԵՈՒԼԱՖ	5— 10	»
ՖԱՍՈՒԼԵԱ	15— 20	»
ՄԻՍԻՐ	10— 15	»
ՏԱՐՐ	8— 10	»

Առապա մուամէլէսի դարձլեն 21.20 ֆրանք հիսապը իլէ տիր.

Печатница „Взаимность“ Варна.